

Հաշմանդամության խնդրի լուսաբանումը

Աշխարհի բոլոր երկրներում եւ հասարակության ցանկացած խմբում կան հաշմանդամություն ունեցող մարդիկ (բնակչության 7-10 տոկոսը): Հաշմանդամության պատճառներն ու հետեւանքները տարբեր երկրներում տարբեր են: Այդ տարբերությունները պայմանավորված են սոցիալ-տնտեսական իրավիճակով եւ պետության՝ իր քաղաքացիների բարեկեցության ապահովմանն ուղղված միջոցառումներով:

Այն երկրներում, որտեղ այս կազմակերպություններն առավել ակտիվ են, ՉԼՄ-ներն ավելի հաճախ են անդրադառնում նրանց խնդիրներին: Սակայն դա՝ միայն զարգացած երկրներում, ուր ժողովրդավարությունն իր հաստատուն քայլերն է անում, որի հիմնական գրավականներից է անխտրական, հանդուրժողական ու բոլորի համար բաց հասարակությունը:

ՉԼՄ-ները հսկայական դեր ունեն հասարակությանն իրազեկելու, կարծրատիպեր կոտրելու, մարդկանց նկատմամբ դրական վերաբերմունք եւ հարգանք ձեւավորելու գործում, դրանք, անշուշտ, կարող են նպաստել Հայաստանում բոլորի համար մատչելի հասարակության ձեւավորմանը, մի հասարակություն, որը հավասարապես հոգ է տանում իր բոլոր անդամների համար եւ երաշխավորում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների լիիրավ պաշտպանությունը: Միայն այս հասարակությունը կարող է գնալ դեպի սոցիալական կայուն զարգացում եւ իրական ժողովրդավարություն:

Այսօր ոլորտի պատասխանատուները եւ խնդրով մտահոգ կազմակերպությունները համակարծիք են, որ հաշմանդամության թեման երբեք չպետք է դուրս մնա ՉԼՄ-ների ուշադրությունից: Սակայն միայն քանակի մասին խոսելն արդեն քիչ է: Լուսաբանման որակն ամենակարեւորն է, այլապես, ինչպես ասացվածքն է ասում, ‘հոնքը սարքելու տեղը աչքը կհանենք’:

Հաշմանդամության խնդրի լուսաբանման սկզբունքները տարիներ շարունակ մշակվել են հասարակական կազմակերպությունների կողմից, որոնք աշխատել են ՉԼՄ-ների հետ: Այսօր աշխարհում ընդունված եւ կիրառելի լուսաբանման սկզբունքները հետեւյալն են.

- լուսաբանումները պետք է հիմնված լինեն հաշմանդամություն ունեցող մարդկանց կրթական, գենդերային, սոցիալական եւ այլ խնդիրների խորը եւ համակողմանի ուսումնասիրության վրա,
- վեր հանեն հիմնախնդիրները՝ ներկայացնելով դրանց հաղթահարման դրական օրինակներ,

- քարոզեն հավասար հնարավորությունների ստեղծման գաղափարը,
- հիմնվեն փաստերի վրա՝ ներկայացնելով իրական պատմություններ, օգտագործեն իրական մարդկանց կենդանի խոսքը,
- պահպանեն հաշմանդամություն ունեցող մարդկանց նկարահանելու եւ ձայնագրելու էթիկայի կանոնները,
- պետք է օգտագործել ճիշտ բառեր,
- հասարակության մեջ դրական վերաբերմունք ստեղծել հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ:

Պետք է խուսափել կարծրատիպեր առաջացնող գնահատականներից ու եզրահանգումներից: Հրապարակումները պետք է օգնեն ընթերցողին հրաժարվելու ընդունված կարծրատիպերից, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ միայն խնամքի կարիք ունեն եւ չեն կարող օգտակար լինել:

Խրախուսվում է համապատասխան լուսանկարների կիրառումը հոդվածներում: Սակայն առանձնակի ուշադրություն պետք է դարձնել դրանց ընտրությանը: Այստեղ եւս չպետք է այնպիսի կադրեր ընտրել, որոնք անհարկի կենտրոնացել են մարդու Ֆիզիկական խնդրի վրա, կամ բավականաչափ տեղեկատվություն չեն պարունակում նրա մասին:

Լրագրողների համար նախապայմանը պետք է լինի իրենց՝ հաշմանդամություն ունեցող անձանց եւ նրանց շահերը պաշտպանող կազմակերպությունների հետ խոսելը, նրանց փորձի ուսումնասիրությունն ու ընդհանրացումը: